ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի թիվ 210 Ա

ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԸ ՄԵԿՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ներքին աուդիտի մասին» օրենքով, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ. թիվ 143-Ն հրամանով հաստատված հավելվածով սահմանված ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտի ձեռնարկ և ներքին աուդիտի կանոնակարգի մշակման ուղեցույցների 177-րդ կետը, 2026 թվականի օգոստոսի 10-ին «Գլոբ Աուդիտ» ՍՊԸ-ի և ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի միջև կնքված ներքին աուդիտի ծառայությունների մատուցման մասին թիվ ՎՁՄ-ԷԱՃԾՁԲ-42/26-1 պայմանագիրը և «Գլոբ Աուդիտ» ՍՊԸ-ի տնօրենի 11/08/2026թ. թիվ Ե-66 գրությունը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Աուդիտի առաջադրանքները մեկնարկել՝ ըստ սույն որոշման հավելված 1-ում ներկայացված ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ներքին աուդիտի տարեկան ծրագրով նախատեսված 2026 թվականի համար ներքին աուդիտի ենթարկվող միավորների (կազմակերպությունների), աուդիտի իրականացման ժամկետների և ներքին աուդիտորների:
2. Աուդիտի առաջադրանքների նպատակը և շրջանակը՝ սույն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածում նշված ներքին աուդիտի ենթակա միավորներում (կազմակերպություններում) իրականացվող գործառույթների՝ ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխանության, ներքին հսկողության համակարգի և/կամ կատարողականի գնահատումն է:
3. Ներքին աուդիտի ենթակա միավորների ղեկավարներին՝

3.1. աջակցել ներքին աուդիտորական առաջադրանքների իրականացնող ներքին աուդիտի աշխատանքային խմբին, ներքին աուդիտորական առաջադրանքների իրականացման աշխատանքներին՝ տրամադրելով ներքին աուդիտորներին ներքին աուդիտի միավորների գործունեության վերաբերյալ ողջ տեղեկատվությունը՝ էլեկտրոնային (լուսապատճենված) ձևով,

3.2. տրամադրել ներքին աուդիտորական աշխատանքային խմբին աուդիտորական աշխատանքների իրականացման համար համապատասխան աշխաատանքային տարածք՝ ապահովելով աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ պայմաններով (աշխատասենյակ, աշխատանքային սեղան, աթոռներ, հնարավորության դեպքում համակարգիչներ, ինտերնետ հասանելիություն և այլն):

4. ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարին՝ Ապահովել սույն որոշման մասին ծանուցումը որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում ներքին աուդիտի ենթարկվող միավորների ղեկավարներին:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Recoverable Signature

X

Signed by: KHACHATRYAN ARSEN 3902800330

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ
2026 թվական օգոստոսի 14
ք. Եղեգնաձոր

Հավելված N 1

ՀՀ Վայոց ձորի Մարզպետի

2026 թվականի օգոստոսի 11-ի № 230 որոշման

Ց Ա Ն Կ

2026թ. ընթացքում «ԳԼՈԲ ԱՈՒԴԻՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից իրականացվելիք աուդիտորական առաջադրանքների և ներքին աուդիտ իրականացնողների

ՀՀ	Միավորի անվանումը	Իրականացնող ներքին աուդիտորները	Աուդիտի իրականացման ժամանակահատվածը
1.	«Եղեգնաձորի պոլիկլինիկա» ՓԲԸ	Դավիթ Հարությունյան, Սամվել Հովսեփյան, Նարինե Գրիգորյան, Գագիկ Հովհաննիսյան	III-IV եռամսյակներ
2.	«Վայքի պոլիկլինիկա» ՓԲԸ		
3.	«Եղեգնաձորի մշակույթի կենտրոն» ՊՈԱԿ		
4.	«Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ		
5.	ՀՀ Վայոց ձորի մարզի «Եղեգնաձորի երաժշտական դպրոց» ՊՈԱԿ		